

ւունքները, ու ժողովրդեան իշխանութիւն տուաւ  
ըստ գրոհից հաւաքուելով՝ տերութեան օգուտը  
վճռել: Այս ժողովքներն ըստեցան ախարհ  
գրոհից, և ասոնց մէջ կ'ընտրուէին թագաւորնե-  
րը, ատենակալները, առաջին կարգի քուրմերը,  
թագաւորէն յառջարկուած օրէնքները կ'ընդու-  
նուէին, և ամէն քաղաքացի քուէ կու տար:

Կը շարունակուի:

## ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ

### Մագդաղինէ:

(Շարունակութիւն. 865 էրես 73)

Դ

Մաւրիտիոսի հեռանալէն վերջը,  
Մագդաղինէ Վալդրավերի գղեկին ու-  
րախութեան առիթ եղաւ. իր շնորհա-  
լից կենցաղավարութեամբը կենդանու-  
թիւն տուաւ այն յարկին, ուսկից երի-  
տասարդն գնացեր էր: Ղեռահասակ  
Ղնտիգոնեայ մը նման՝ եռանդեամբ ու  
մեծարանօք կը խնամէր իր ծերունի մօր  
քուրայրը. թէպէտ տխուր էր գեռ սիր-  
տը և իր հասակէն վեր հակամէտ էր  
միտքը լուռ մտածութեան, սակայն զա-  
նիկայ ուրախացընելու համար՝ ինքն իր  
բնութենէն դուրս ելաւ, և իր սովո-  
րական ծանրութիւնը ծիծաղերես զուար-  
թութեան մը փոխեց: Երբոր զուար-  
ճութեան կ'ելլէր ասպետը՝ միշտ հետն  
էր, երբոր գործանոցին մէջ կ'աշխա-  
տէր՝ քովը կ'անցընէր իր ժամանակը,  
լրագիրները բարձր ձայնով կը կարդար  
անոր, անդադար կրկնել կու տար անոր  
վտարանդութեան ժամանակի պատմու-  
թիւնները, և մեծ ախորժով կը գովէր  
այն ամէն փայտաքանդակները՝ որոնց-  
մով անխոնջ արուեստաւորը գղեկին  
ամէն անկիւնները կը լեցընէր: Միան-  
գամայն՝ սիրելի էր, և ճշմարտապէս  
սիրելի, մարդիզուհւոյն՝ որ նկարչու-  
թիւն կը սորվեցընէր իրեն, և իր Վս-  
տուծմէ ընդունած ամէն հաճոյական  
ձիւրքերը կատարեւագործել տալու կը  
ջանար: Ղրանկով այս աղջիկը երկու

ծերունեաց հետ կեանքն անցընելով,  
թէ իր մտաւորական տաղանդն և թէ  
ցանկալի առաքինութիւններ աճեցան  
վրան: Մագդաղինէ՝ իր գալէն իրեք  
տարի վերջը, ընտիր ու գեղեցիկ արա-  
րած մը դարձեր էր: Տան խնամակա-  
լութեան հոգը իր վրան էր, և առտնին  
բարեկարգութեան վրայ ինքը կը հըս-  
կէր, և խմաստութեամբ ու խոհեմու-  
թեամբ կը շարժէր այս գործոց մէջ, և  
վեհութիւն մը, բանաստեղծական շը-  
նորհք մը ու մտածութեան կերպ մը  
կը փայլէին իր վրայ, զորոնք ժառան-  
գած էր մօրմէն, ի Ղերմանիոյ և Ղս-  
տուծոյ: Մէկ խօսքով՝ երիտասարդու-  
թեան և առողջութեան գարնան մէջ  
էր իր հասակը, այն եղանակին մէջ՝ որ  
անձայն իր շրջակայ արարածոց շար-  
ժումն, երջանկութիւն և կեանք կու  
տայ:

Ղիւրաւ կրնայ մարդ մտածել թէ  
այսպիսի յատկութեամբ Մագդաղինէ  
ինչպէս կ'երևար մարդիզուհւոյն և աս-  
պետին աչացն առջև: Իրենց ծերու-  
թեան զուարճութիւնն էր, և քաղցր  
ճառադայթ մը որ իրենց կենաց վերջին  
օրերը կը լուսաւորէր: Այս երեք հո-  
գիք այսպիսի մտերմութեամբ մը յիրար  
խառնած՝ ծանր ու խաղաղ ընթացքով  
մը կը սահեցընէին իրենց ժամանակին  
այլքները, և ամենեւին չէր կարծուեր  
որ այն թափանցիկ ալեաց պայծառ յըս-  
տակութիւնը պիտի պղտորէր: Սակայն  
եկաւ ժամանակ որ այս վճիտ ջրերուն  
յատակն սկսաւ չէրկնալ:

Մաւրիտիոսի գրած առջի նամակնե-  
րը զեղուն էին բանաստեղծութեամբ  
և ախորժական վայելչութեամբ, և կը  
նմանէին մարդագետնի մէջէն ժող-  
վուած թարմ ու անուշահոտ ծաղկանց  
փունջերու: Ղրանկ կը գրէ մարդ այդ  
հասակին, որ խիստ շուտով կը փախչէ:  
Ղյն զունստ ժամն հասած ատեննիդ՝  
երբոր կենաց սանդուխէն կը սկսիք վար  
իջնալ, գտէր էք երբեմն արդեօք հին  
դարանի մը մէջէն ձեր երիտասարդու-  
թեան ժամանակի գրած նամակներէն  
մէկընին. չէք զարմնոյած զանոնք կաշը-

դալով, և արցունքներ թափելով չէ՞ք նորոգած մտքերնուդ մէջ ձեր գեղեցիկ տարիներուն յիշատակը: Այս րոտոյ ձեր սրտին ներկայ վիճակը ցաւով մտածելով չէ՞ք հարցունցած զուք ձեզի թէ արդեօք այդ աղբիւրէն, որ հիմա ցամքելու մօտ է, բղիւսեր են ատենօք խանդի, հաւատոյ, շնորհաց և առաքինութեան, սրտի անկեղծութեան և սիրոյ այսչափ դանձերը: Ահա սակայն այսպիսի նամակներ կը գրէր Աւերիտիոս քսան տարուան:

Այս պատճառաւ սուրհանդակի օրերը հանդիսի օրեր էին Ալղրավէրի գղեկին համար: Ապագայինէ գեղին թղթաբերին հեռուանց գալը տեսնելուն պէս՝ դիմացը կը վազէր, և նամակն առած ցատքըտելով տուն կը դառնար: Սովորաբար ինքը կը կարդար բարձր ձայնիւ իր մօրաքեռորդայն թուղթերը. երբոր իր անունը յիշատակուած կը գտնար անոնց մէջ, որ միշտ չէր հանդիպեր, թեթեւ կարմրութիւն մը կը շառագունէր ալապասդրեայ դէմքը: Այն որ յիշատակուած չըլլար, որ ստեպ կը հանդիպէր, ոչ կը զարմանար անոր վրայ և ոչ ալ կը տխրէր. միայն թէ ինչուան իրիկուն աւելի ծանր և աւելի լուռ կը կենար: Այս նամակները մտիկ ընելու ատեն՝ բարի ասպետին բոլոր ջիղերը կը տնկուէին, և իր եռանդուն սիրոյն կրակովը բորբոքած՝ ազնուական ոգւոյ մը և վառ խելքի մը զարգանալը կը դիտէր ի նոսա: Արիշ կողմանէ ալ՝ իր մէկքանի Աարիզ ունեցող ծեր բարեկամները անդադար իրեն ուրախակցութիւններ կը գրէին որդւոյն համար, մեծամեծ գովեստներ խօսելով և հիանալի դիպուածներ պատմելով վրան: Ահե՛կ էր տան ինտումը. և Աւերիտիոսի դարձին անձկանօք կը սպասէին:

Բայց տարի մը անցաւ չանցաւ՝ մեր երիտասարդը սկսաւ քիչ անգամ նամակ գրել, անոնք ալ համառօտ, և զուրկ ի փափկութենէ և ի սիրալիր բանից: Ատածութեան տարտամութիւն մը կը նշմարուէր անոնց մէջ,

բացատրութեանց բռնազրօսութիւն մը, և յայտնի կ'իմացուէր որ զգայարանաց և հոգւոյ սաստիկ խռովութիւն մը պատերէ զԱւերիտիոս: Վաղեկին գաղթականները այս բանիս վրայ սկսան վշտանալ ներքուստ. ետքը այն աստիճանի աւելցաւ վիշտերնին, որ իրարու ալ կը հաղորդէին իրենց սրտին տազնապը: Վաղցր յանգիմանութիւններ գրուեցան Աւերիտիոսի. բայց անիկայ փախուստ կու տար անոնց պատասխանելու: Աարիզ կենալու որոշուած միջոցը շատոնց լմնցեր էր. և սակայն Աւերիտիոսի վրայ ամենեւին կամք չէր երևար ճամբայ ելլալու դէպ ի Վերմանիա կամ Իտալիա: Եսպետը կը բռնադատէր զինքը որ որոշմանն հպատակի, իսկ անիկայ պատասխան չէր տար. բայց երբոր հայրը անդադար կը կրկնէր իրեն նոյն բանը, վերջապէս պատասխանեց յանդուգն խօսքերով նամակ մը գրելով, որուն մէջ կը հասկըցուէր որ հպատակութեան սանձերը խղել կ'ուզէր: Վեռ այն ատենն ալ ծեր բարեկամները կը գրէին նամակ Ալղրավէր ասպետին, բայց գանգատ ընելով որ Աւերիտիոս առջինին պէս չէր: Հուսկ ուրեմն սկսան երբեմն երբեմն փոխանակագիրներ գալ ասպետին վրայ, որ թնդանօթի հարուածներու պէս կ'իջնային տնեցոց սիրտը, և տխուր սարսափ մը առաւ զիրենք: Այս բաներս շաբթուան մը մէջ չեղան, և ոչ իսկ ամսուան մը մէջ. և սակայն իրեք տարի չքաճ այս աստիճանին հասաւ երիտասարդը:

Այսչափ ալ բաւական չէ. թէպէտ Աւերիտիոսի բերած սուտ պատճառանքներն որով կ'ուզէր պարտելել իր անկարգութիւնները՝ քիչ մը կը խաբէին Ալղրավէր ասպետը, բայց չար մարդիկ, որ Վաղղիոյ գաւառաց մէջ այնչափ առատ են, չէին դանդաղեր պղտորելու ծերունայն միտքը: Արով հետեւ խիստ ազնիւ անձ մըն էր տըր Ալղրավէր, վեհանձն, ամենուն հետ ընտանի, սիրելի և ազնուական սիրտ ունէր, և արդար բնաւորութիւն, ա-

նոր համար բնականապէս շատ թշնամի  
ունէր այն կողմերը . իր գեղացիները  
զինքը կը սիրէին , բայց մօտի քաղաքին  
մէջ խել մը զինուորական մարդիկ և  
փաստաբանք , որոնք զինեօանց զարդն ,  
ազատամտութեան պարագլուխներն և  
ընկերութեան որդն էին , սաստիկ զայ-  
րացած էին՝ ասպետին նորէն իր կա-  
լուածները դառնալուն և հօն նորէն  
սիրելի եղած ըլլալուն վրայ : Բոլոր այդ  
քաղաքին մէջ ամէնքը երկայն ատենէ  
'ի վեր գիտէին Սաւրիտիոսի ինչ  
կեանք անցընէն 'ի Ռարիզ . որովհետեւ  
հայրենական գաւառ ըսածդ անանկ  
բնութեամբ մայր մըն է , որ իր հեռա-  
ւոր որդւոց վրայ անհոգութեամբ չանց-  
նիր , անոնց կենաց ընթացքը հետա-  
քըքիր , չար և նախանձոտ աչքով մը  
կը դիտէ : Ինչհետեւ իսուելով ,  
երբոր կ'ուզէս յուսահատցնել ու սար-  
սափ ձգել այն մարդկանց սիրտը , որ  
ծննդեանդ կամ հասակիդ աճմանը տե-  
սող եղած են , արդար ճամբով և ան-  
խառն՝ յաջողութեան , պատուոյ կամ  
հարստութեան ճամբուն մէջ առաջ  
գնա : Ինչ հակառակն թէ որ կ'ուզէս  
պաղըշարկցնել անոնց սիրտը , ճամբադ  
խտտորէ , անանկ որ առաքինի քաղա-  
քակիցներդ կարենան կործանմանդ վը-  
րայ լալ : Երբոր մեր քաղաքակիցները  
կու լան վրանիս , ըսել է որ ծաղր ընե-  
լու աղէկ ախորժ ունին :

Եսով է որ Սաւրիտիոս քիչ ատե-  
նուան մէջ այս քաղաքին մէջ հասարա-  
կաց քայլակողութեան և ներքին գո-  
հութեան մեծ առիթ մը եղաւ : Խել  
մը սիրալիր ազդարարութեանց , և կեղ-  
ծաւորական ցաւակցութեանց նամակ-  
ներ գրուեցան ասպետին . իսկ մնացած  
պաշտօնն ալ անանուն թղթերը կատա-  
րեցին :

Սարգիզուհին արցունքները կը բռ-  
նէր . իսկ ասպետը օր օրուան վրայ ըզ-  
գալի կը տկարանար : Եւ մենայն երջան-  
կութիւն անհետացեր էր երկայն ատե-  
նէ 'ի վեր այս ծերունի բարեկամներուն  
տուններէն : Սագղաղինէ մէյ մը մէ-  
կին՝ մէյ մը մէկալին կ'երթար մխիթա-

րիչ հրեշտակի մը պէս . կը պաշտպա-  
նէր զՍաւրիտիոս և կ'ըսէր թէ անա-  
ռակ որդին քիչ ատենէն պիտի դառնար .  
սակայն ինքն ալ ըսածին չէր հաւատար ,  
և շատ անգամ կ'առանձնանար արցունք  
թափելու համար : Յայտնի տեսնուե-  
ցաւ որ ազնիւ ասպետը վերջին աստի-  
ճանի վշտացած էր , որովհետեւ սկսաւ  
փայտի քանդակագործութեան քիչ ե-  
տենէ ըլլալ , և ետքը ինչուան բոլորովին  
թողուց : Եւ անկէ վերջը ամենեւին մէկ  
բանէ մը համ չէր առնէր . Սագղաղի-  
նէ միայն կրնար թեթեւ զուարթու-  
թիւն մը տալ իր ճակտին և շրթանցը  
վրայ տիրական ժպիտ մը ծնանել տալ :  
Սաղրավէր կ'ըսէր երբեմն անոր .  
« Պէտք է որ , խեղճ աղջիկս , մեռնե-  
լէս առաջ քու բաղդդ ապահովցնեմ .  
որովհետեւ Սաւրիտիոսի բռնած ճամ-  
բուն նայելով՝ ամենեւին յոյս չկայ որ իմ  
մահունէն վերջը զքեզ հոգայ : —  
Փաղ տուր , հայր իմ , կը պատասխա-  
նէր Սագղաղինէ , թող տուր , մի մտա-  
ծեր ասոր վրայ : Ես ուրիշ բան չեմ  
ուզեր՝ բայց եթէ զքեզ սիրել . ես բա-  
նի մը կարօտ չեմ ըլլար քու մահունէդ  
վերջը : Փառք Եստուծոյ՝ կտրըճութի  
և կամք ունիմ , և ինչ որ դու և մարդի-  
զուհին ըրիք 'ի Վերմանիա , նոյնը ես  
'ի Վաղղիա կ'ընեմ , սիրելի հայրս .  
կ'աշխատիմ , կ'աշխատիմ » : Ներու-  
նին կը ժպտէր ու թեթեւ մը գլուխը  
կը շարժէր : ( ) րմը գեղահասակ օրիոր-  
դը մտածեց ծածուկ նամակ մը գրելու  
իր մօրաքեռորդույն . ո՛հ , ինչ սրտով  
գրուած նամակ էր . բայց Սաւրիտիոս  
չպատասխանեց : Իսկ ասպետը ալ չէր  
գրեր . հազիւ թէ թող կու տար իր  
վերջին ժամանակները որ տղուն վրայ  
իր առջև խօսին : Սակայն տեսնալով  
որ օր ըստ օրէ կ'իյնայ և վախճանն ալ  
կը մօտենայ , միտքը դրաւ վերջին ան-  
գամ մ՝ ալ սիրոյ և յուսահատութեան  
ուժգին ձայն մը հասցնել այն թշուառ  
երիտասարդին ականջին :

Պատասխանն ուշացաւ . իրեք ամիս  
անցնելէն ետքը , վերջապէս եկաւ :  
Սաւրիտիոս գրեթէ տարիէ մը 'ի վեր

Բարիզէ հեռացած ըլլալով՝ ո՞ր գիտէ  
գէպ ՚ի ճւր և որսն հետ, ՚ի դարձին  
կարգացեր էր իր հօրը վերջին խրատ-  
ները: Բստուածային շնորհքով մը՝ ե-  
րիտասարդը նորէն լուսագոյն զգացմունք-  
ներ կը ստանար, ինչպէս որ կը վկայէր  
իր նամակը. կ'երևար անոր մէջ թէ  
հոգին ինչ կործանման վիճակի մէջ էր,  
և միանգամայն իր բրած յետին ջանքն  
որ նորէն ուղղուի: Իր ծերունի հօրն  
ստբը կը պլլուէր, համբուրիւ և արտա-  
սուօք կը թըջէր մարգիզուհւոյն ձեռ-  
քը. իր յորդեռանդն զըջման խօսքերուն  
մէջ Սաղգաղինէի անունն ալ կը խառ-  
նէր: Եւ խոստանար որ քանի մը շաբա-  
թուան մէջ ամէն չար կապանքներէ  
լուծուած՝ ճամբայ կ'ելլար. մշտնջե-  
նաւոր հրաժարական ողջոյն մը կու տար  
զինքը միւրօրցնող աշխարհիս. կ'ըսէր  
թէ ալեկոծութեան տագնապը քաշած  
ըլլալով, ալ կ'ուզէր նաւահանգիստը  
մտնալ ու մէյ մ'ալ չելլալ անկէ: «Ու-  
րեմն նորէն պիտի տեսնամ՝ գլխի, կ'ա-  
ւելցնէր, ո՞վ յարկ հայրենական. նո-  
րէն պիտի դառնամ՝ ի քեզ, ո՞վ մանկու-  
թեանս սիրելի բոյնը: Ո՞վ պատանե-  
կութեանս տենչալի ընկերները, ուրեմն  
քիչ ատենէն պիտի գրկուիմ ձեզի հետ.  
նոյնպէս քեզի հետ ալ, ո՞վ մօրաքեռ աղ-  
ջիկս, որ ո՞ր գիտէ որչափ մեծցեր ու գե-  
ղեցկացեր էս», ի Լ. յս վառվառն գա-  
ղափարներով երևակայութիւնը բորբո-  
քելով՝ այդ վայրկենին իր պատանե-  
կութեան շնորհալի ու առողջ վիճակը  
դարձեր էր Սաղգաղինէի: Գլխադրա-  
բար՝ երբոր այս նամակը զղեակն հա-  
սաւ, քսանըջորս ժամէ ՚ի վեր ասպետը  
փոխեր էր յաշխարհէս՝ ՚ի ներկայութե-  
մարգիզուհւոյն և Սաղգաղինէի, ու  
րոնք իր մէյմէկ ձեռքէն բռնած էին:

Յուզարկաւորութեան օրը, երբոր  
ծածկեցին ընդ հողով այն սքանչելի  
անձին մարմինը, որ պատահմամբ աղ-  
նուական ծնած էր, և զոր աշխատու-  
թիւնն ու աղքատութիւնը մարդ բրած  
էին, մարգիզուհւոյն առաւ հետը տա-  
րաւ զՍաղգաղինէ, որ այս երկրորդ  
անգամ որբացեր էր: «Աղջիկս, ըսաւ

իրեն, դեռ քու ընելիքդ չմընցաւ. դեռ  
պիտի օգնես ինձի մահուանս ժամա-  
նակը և աշուքներս գոցես», ի Լ. արու-  
գիրկը պլլուեցան, և այնպէս երկար  
ժամանակ գիրկընդխառն կեցան: «Ի՜հ,  
աղաղակեց մարգիզուհւոյն, որովհետեւ  
դու իմ աղջկանս յարութիւն առնել  
տուիր, ինձի ալ կ'իյնայ որ քեզի մայ-  
րութիւն ընեմ», ի Լ.:

Լ. յն օրուրնէ սկսեալ Սաղգաղինէ  
Ֆրէզնը զղեակը բնակեցաւ: Բսպետը  
մահուրնէն շաբաթ մը առաջ ինքնագիր  
առանձին կտակ մը յանձնէր էր մարգի-  
զուհւոյն ձեռքը, որով իր քենւոյն աղ-  
ջըկանը կը թողուր իր Գաւտրէի աղա-  
րակը, որ 80-100 հազար Ֆրանքի չափ  
կ'աժէր: Լ. յս համառօտ կտակը սիրա-  
լիր ու սրտաշարժ խօսքերով գրուած  
էր, և կտակագրին փափուկ սրտին գե-  
րազանց լաւութիւնը կը յայտնէր: Տը  
Ֆրէզնը տիկինը՝ անշուշտ ասպահովը-  
նելու դիտմամբ զՍաղգաղինէ իր ապա-  
գայ վիճակին վրայ, իրեն ձեռքը տուաւ  
այս ասպետին սիրոյն անջնջելի գրաւա-  
կանը: ( ) իրորդը նախ երախտագիտու-  
թեամբ ու պատկառանք համբուրեց  
զայն և սրտին վրայ դրաւ. յետոյ պա-  
տուեց, և կտորները ինքնամով ծոցը դրաւ:  
— «Ո՞հ, ինչ բրիւ, աղջիկս, աղաղա-  
կեց մարգիզուհւոյն՝ արտաքուստ խու-  
վեալ ձեւացրնելով ինքզինքը, բայց ներ-  
քուստ հիանալով: — Գաւտրէ ինձի կը  
հարցնես զայդ, ո՞ր աղնուական սիրտ,  
պատասխանեց Սաղգաղինէ ժպտելով:  
Լ. յս Սաղգաղինէի անցուցած կենաց  
վրայ ստոյգ տեղեկութիւն մը չունիմ.  
այսչափ միայն գիտեմ որ հարկաւ իր  
բոլոր հօրենական ընչիցը կը կարօտի,  
և չեմ կրնար ընդունիլ այնպիսի բա-  
րերարութիւն մը, որ իր ստացուածոց  
մէկ մասէն կը զրկէ զինքը: Բսպհով  
եղիր, սիրեցեալ տիկին, որ բրածս ա-  
ղէկ գործք է. և թէ որ դու ալ իմ  
տեղս ըլլայիր, նոյն բանը կ'ընէիր: —  
Բայց, խեղճ աղջիկս, դու բան մը չու-  
նիս. և աս ալ կ'ըսեմ՝ քեզի՝ որ յոյսդ  
Սաղգաղինէի գլխին վրայ չգնես: Լ. յրբ  
որ էս ալ երթամ, և գիտես որ ալ եր-

կայն ժամանակ չեմ կրնար կենալ երկրիս վրայ, սիրելի աղջիկս, ինչ պիտոր ընես դուն: — Ինչ որ կ'ընէ մէկն որ արիասիրտ է և կամքով զինեալ: Քեզմէ առած դասերովս այնչափ հարուստ չեմ՝ որչափ որ էիր դու Վիւրեմ պերկ հասած ժամանակդ: Կը յուսամ թէ Բստուած, որ ան ատեն քեզի օգնութեան հասաւ, զիս երեսէ չձգեր, և ես ալ բոյն մը կը գտնամ՝ ինչպէս որ դու գտար: — Ո՛վ ազնիւ օրիորդ, ըսաւ մարգիզուհին իր սպիտակ ու վըտիտ ձեռքերուն մէջ առնելով Սագդաղինէի գլուխը և ճակատն ու մազերը համբուրելով:

( ) օրուան վրայ կը սպասէին Սաւրիտիոսի, որուն սրտին վրայ կայծակի պէս իջեր էր հօրը մահուան գոյժը: Ըաբաթներ, ամիսներ անցան, Սաւրիտիոս չերեցաւ: Վիչ ատենէն լսեցին որ գործակալութեան թուղթ խըրկեր էր մէկու մը, որ ետեւէ էր կարգի դնելու դուրս ելած խառնակութիւնները: Սաւրիտիոս մէկէն հօրը մահուանէն քիչ ետքը՝ առանց զգացման, բայց քաղաքավարական նամակ մը գրեր էր իր մօրաքեռ աղջրկանը, որուն մէջ իր հօրը ժառանգութեանէն մեծ մաս մը կը հանէր իրեն, այն Վուտրէի ագարակը, ուսկից որք աղջիկը վեհանաճաքար հրաժարեր էր, անանկ որ Սաւրիտիոս առանց գիտնալու այն բանը կ'ընծայէր Սագդաղինէի, զորն որ անիկայ իրեն կու տար: ( ) ըստղը պատասխանեց որ տը Ֆրէզնը տիկնոջ քով կը բնակէր և ամենեւին բանի մը կարօտ չէր. երիտասարդը վրայ չտուաւ: Բայց ինչ ըրեր էր արդեօք իր բարի առաջադրութիւնները. թերեւս սրտին վշտէն ու պատկառանքէն դեռ չէր համարձակեր տէսնալու այն գերեզմանը, զորն որ կրնար իրաւամբք իր յանցանաջը պատուղը սեպել:

Երբ Ֆրէզնը գղեկին մէջ այս վերջին յուսով կը մխիթարուէին մարգիզուհին և օրիորդը և կը գովէին զինքը այս ամօթոյ զգացմանն համար, անկէջ քանի մը քայլ հեռու Սաւրիտիոսի

ստացուածները ետեւէ ետեւ անշարժ գրաւի կը դրուէին: Հազիւ տարի մը անցաւ ասպետին մահուան վրայ, ձայն մը տարածուեցաւ այն կողմերն՝ որ Սաւրիտիոսի կալուածն ու գղեակը աճուրդի պիտի հանուէին: Սարգիզուհին և Սագդաղինէ չհաւտացին աս բանիս և զրպարտութիւն սեպեցին, ինչպէս որ ինչուան այն ատեն ըրեր էին Սաւրիտիոսի վրայօք շրջակայից մէջ ձայնձընուած խօսքերուն միջոց: Սակայն օր մը որ անտառին մէջ մեկտեղ կը պտըտէին՝ Սաւրիտիոսի վրայ խօսելով, զոր պախարակելով ալ հանդերձ կը սիրէին, պարտիզին վանդակապատ դրան ծակերէն տեսան որ խել մը ծառաներ ու գեղացիներ գաւթին աստիճաններուն վրայ ասդին անդին ժողովուած՝ տաք տաք կը խօսէին իրարու հետ և սարսափով պաշարուած կ'երևային: Կէս մը ներքին ազգամաք, կէս մ'ալ հետաքրքրութեամբ՝ առաջ գացին ներս մտան, ինչպէս ուրիշ անգամներ ալ ստէպ կ'երթային: — « Բ՛հ, խաթուն, անհ, ազնիւ օրիորդ, աղաղակեցին ամէնքը միաբերան՝ երբոր անոնց մօտեւանը տեսան. անհ, այս ինչ մեծ թըշուառութիւն է որ ամենուս գլուխն եկաւ: Կայծակ մը իջաւ վրանիս, ու զմեզ մոխրի վրայ պիտի նստեցընէ: — Ի՞նչ կայ, զաւակներս, ինչ եղաւ, ինչ ունիք, հարցուց տը Ֆրէզնը տիկինը: — Տես տես, մարգիզուհի. անհ, ինչ կ'ընէ արդեօք երկնքէն մեր ազնիւ տէրն՝ ասպետը, Բստուածը՝ կը ցուցընէին մատով գղեկին դրան և ճակտին վրայ կպուցած վաճառման ծանուցումները տէրութեան կնքով:

Սագդաղինէ գլուխը ծռեց, և առանց հեծեծանաց երկու արցունքներ երեսներէն ի վար վազեցին. ինչուան այն ատեն բոլորովին չէր ըմբռնած Սաւրիտիոսի վրայ պատմուած անկարգութեանց ինչ ըլլալը, անոր համար ալ միշտ ի ներքուստ անպարտ սեպած էր զանիկայ. բայց այս անգամուն իր աղնուական բնածին զգացումը վերջին աստիճանի զգուշելով՝ խմսցաւ որ երիտա-

սարդն 'ի կորուստ հասեր էր : Իսկ մարգիզուհւոյն գալով, զայրացած սրտին արինը բոլոր գլուխը զարկաւ, այն սըրտին՝ զոր հասակը չէր սառեցուցած, և միշտ երիտասարդ էր և եռանդուն : — “Չէ, զաւակներս, չէ, աղաղակեց հաստատութեամբ, քանի որ ես կ'ապրիմ՝ այս կալուածն և այս դղեակը չար մարդկանց ընկերութեանն աւար պիտի չըլլան : Թող պիտի չտամ որ անմիտ և անզգամ մարդիկ այս մեծ ուրախութիւնն ունենան : Ուստի ապահով եղէք : Դուք վարձակալքդ՝ ինչպէս որ մինչև հիմա, այսպէս ասկէ ետքն ալ ձեր տնակներուն մէջ կը մնաք՝ որոնց մէջ ծնած էք, դուք ծառայքդ ալ՝ այս տանս մէջ, ուր մեծցած էք : Ձեր կեանքը ամենեւին պիտի չփոխուի : ձեզի երաշխաւոր ըլլայ խոստմունքս, և գացէք շուտով միւրթարեցէք ձեր կանայքն ու որդիքը : ”

Յետոյ առանց ժամանակ անցընելու՝ կանչել տուաւ իր նոտարն, և անոր ձեռքովը գնել տուաւ Սալդրավէրի կալուածը : սակայն անկէ ետքն ալ շարունակեց Սագգաղինէի հետ ֆրէզնը գղեկին մէջ ապրիլ, ուր մեռած էր իր աղջիկը, և ուր ինքն ալ կ'ուզէր մեռնիլ : Երկայ մարգիզուհւոյն վերջին գործողութիւնն եղաւ : որովհետեւ ըզդալի կը տեսնուէր որ իր հին բարեկամը անդիի աշխարհ կը հրաւիրէր զինքը : “Ըստ սպասեցուցի խեղճը, կ'ըսէր աւ Սագգաղինէ : պէտք է որ երթամ գտնամ զինքը : բայց բանը ան է որ ինչ պատասխան տամ իրեն՝ երբոր որդւոյն վրայօք հարցընելու ըլլայ ինծի : ”

Սահաւան նախընթաց օրը՝ երկայն թմրութիւն մը եկաւ վրան : երբոր արթնցաւ, Սագգաղինէի դարձաւ, որ քովը նստած էր, և ըսաւ անոր : “Ըրտաքոյ կարգի երազ մը տեսայ հիմա, պատմեմ քեզի որ զարմանաս : Արտես նայի զՍալդրալիոս խոր անդունդի մը մէջ : գարշելի զեռուններ քովը կը սողային ու կը չէին, և ողորմելի յուսաւ հատաբար կը յոգնէր կը ջանար վեր

ելլալու որ լոյս տեսնայ : Աւզէի ես օգնութե հասնիլ, բայց ոտքերս գետնին վրայ անշարժ կեցեր էին, և ձեռքերս որ դէպ 'ի իրեն երկնցուցի անկարող էին : մէյ մ' ալ յանկարծակի զքեզ տեսայ՝ որ հեռուէն կու գայիր հանդարտ և զուարթ կերպարանքով : Ենդունդին քովն որ հասար, քակեցիր վզէդ այն ճերմակ կտաւն որ կ'ընկիդ վրայ կը ծածանէր, ծիծաղելով նետեցիր զայն Սալդրալիոսի, որ բռնեց զայն, և առանց նեղութեան վեր առիւր զինքը : Սալդրալիոս լուսաւոր էր և բոլորովին փոխուած : Ըհա այս է երազս : Ինչ կ'ըսես, աղջիկս : ”

Տխուր ժպիտ մը ծնաւ Սագգաղինէի շրթանցը վրայ : սկսաւ ինքիրեն մտածել, և պատասխան չտուաւ : Սարգիզուհին երկրորդ օրը մեռաւ, կամ լաւ ևս ասել՝ ճրագի մը պէս մարեցաւ գերմանացի օրիորդին աչացն առջև : — “Պզտի աղջիկս, ըսեր էր Սագգաղինէի մեռնելէն քանի մը ժամ առաջ, կտակիս մէջ չեմ մուցած զքեզ : Որովհետեւ կ'իտուածանկարը կ'ախորժիս, ունեցած գոյներս և վրձիններս քեզի թողուցի : նայէ որ անոնցմով էրիկ մը գտնաս քեզի : Իրաւցընէ՝ կը տակն որ բացուեցաւ, Սագգաղինէ տեսաւ որ մարգիզուհին ճմարիտ ըսեր էր : միայն թէ՛ այս պզտիկ ժառանգութեան վրայ Սալդրալիոսի կալուածն ու դղեակն ալ աւելցուցեր էր, առանց ամենեւին զրկելու իր բուն ժառանգները, որ արդէն կարօտ չէին : ”

Երանկով այս դեռահասակ օրիորդը մտաւ իբրեւ տէր այն տունը, ուր հինգ տարի առաջ աշնանային իրիկուն մը պզտի ծրար մը թևին տակն առած մտեր էր :

